

Հետխորհրդային տարածքի միջերնիկ հակամարտությունները. «Ղրիմի հիմնահարցը» ներկայիս փուլում

Հովհաննիսյան Ա. Յու.

Հայ-Ռուսական համալսարան /Հայաստան, Երևան /,
andranik.hovhannis@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Ուկրաինայի ԽՍՀ, Ռուսաստան, Արժանապատվության հեղափոխություն, անկախության հանրաքվե, Ղրիմի Հանրապետություն, «Ղրիմի հիմնահարց»:

Межэтнические конфликты на постсоветском пространстве: «Крымский вопрос» на современном этапе

Ованнисян А. Ю.

Российско-Армянский университет (Армения, Ереван),
andranik.hovhannis@gmail.com

Резюме: В Советский период было принято множество нелепых административно-территориальных решений в виде межреспубликанских территориальных передач. С коллапсом СССР в 1991 году на постсоветском пространстве актуализировались почти все «замороженные» этнополитические вопросы, в том числе проблема Крыма. В данной статье автор затрагивает «Крымский вопрос» на современном этапе.

Ключевые слова: Украинская ССР, Россия, Революция достоинства, референдум о независимости, Республика Крым, «Крымский вопрос».

Interethnic conflicts in the post-Soviet space: “The Crimean issue” at the present stage

Hovhannisyan A. Yu.

Russian-Armenian University (Yerevan, Armenia)
andranik.hovhannis@gmail.com

Abstract: In the Soviet period, many controversial administrative-territorial decisions were made in the form of inter-republic territorial transfers. With the collapse of the USSR in 1991, in the post-Soviet space, almost all the "frozen" ethnopolitical issues were actualized, including the problem of the Crimea. In this article the author focuses on the "The Crimean issue" at the present stage.

Keywords: Ukrainian SSR, Russia, The Revolution of Dignity, the Referendum on Independence, the Republic of Crimea, “the Crimean issue”.

Միջերնիկ հարաբերությունների ոլորտը հանդիսանում է հասարակական հարաբերությունների առավել պահպանողականն ու զգայունը, որը չափազանց ակտիվորեն է արձագանքում հասարակության կյանքի սոցիալ-տնտեսական և հոգևոր-բարոյական ցանկացած փոփոխությանը: Էթնոսները պատմական երևույթ են, որոնք հիմնականում անցել են հազարամյակների պատմական զարգացում և ժամանակի մեջ փոփոխականության առումով ավելի ստատիկ հասկացություններ են, քան քաղաքական ռեժիմները: Սա իր հերթին պայմանավորում է էթնոսների անհանգստությունը սեփական ներկայի և ապագայի նկատմամբ, որը հանդիսանում է ցանկացած պետության ու հասարակության սոցիալ-քաղաքական փոփոխությունների առավել խորքային ինդիկատորը:

Արդի աշխարհում էրնիկ հակամարտությունները անխուսափելիորեն ձևափոխվում են էթնո-քաղաքական հակամարտությունների, քանի որ դրա մեջ ներգրավվում են սեփական քաղաքական շահերը հետապնդող տարբեր ուժեր: Դա էլ իր հերթին էթնո-քաղաքական կոնֆլիկտները բերում է միջազգային հարաբերությունների ոլորտ և դարձնում միջազգային հարաբերությունների ուսումնասիրության առարկա: Տարածված տեսակետ կա, թե էթնոսների միջև մշակութային, լեզվական, կրոնական և այլ բնույթի պատմականորեն ձևավորված տարբերությունները ինքնին չեն հանդիսանում հակամարտությունների առաջացման պատճառներ: Սակայն, նշված էթնո-մշակութային տարբերությունները կարող են առիթ հանդիսանալ հակամարտությունների զարգացման համար: Այսինքն, «ազգայինի»

մասնաբաժինը էթնո-քաղաքական հակամարտությունների մեջ աննշան է /դրանք պատճառ չեն, այլ միայն առիթ/, որոնցում որոշիչ նշանակություն ունեն քաղաքական գործոնները: Երկրենտ քաղաքական աշխարհի կործանումը յուրատեսակ խթան հանդիսացավ բազմաթիվ լատենտ և «սառեցված» հակամարտությունների ակտիվացման համար: Միայն 1988-1991 թթ. ժամանակահատվածում նախկին խորհրդային հանրապետություններում ազգային հողի վրա տեղի են ունեցել ավելի քան 150 բախումներ, որոնցից 20-ը ուղեկցվել են մարդկային կորուստներով:

Ղրիմն իր պատմության ամբողջ ընթացքում բազմիցս ենթարկվել է տարբեր զավթիչների արշավանքների՝ սկյութերի, սարմատների, գոթերի, գունների, հույների, հռոմեացիների, մոնղոլ-թաթարների և այլն: Այս հանգամանքն իհարկե իր արտացոլումն է ունեցել երկրամասի բնակչության ազգային կազմի վրա: Ավելին, XV դարում թուրք-օսմանները՝ զավթելով Ղրիմը, թուրքացման են ենթարկել թերակղզու գրեթե ամբողջ բնակչությունը: 1768-1774 թթ. ռուս-օսմանյան պատերազմից հետո՝ համաձայն Քյուչուկ-Քայնարջի խաղաղ պայմանագրի, վերջ դրվեց օսմանյան տիրապետությանը Ղրիմում, իսկ 1783 թ.-ին Եկատերինա II մանիֆեստ հրապարակեց Ղրիմը Ռուսական կայսրության կազմում ընդգրկելու մասին: Պետք է նշել, որ XIX-րդ դարի վերջում Ղրիմի էթնիկ կազմը շատ բազմազան էր / տես՝ աղյուսակ №1 /:

Աղյուսակ №1. Ղրիմի բնակչության ազգային կազմը XIX-րդ դարի վերջում¹:

Էթնիկ խումբը	Բնակչություն թիվը	%
Ղրիմի թաթարներ	194 294	35,5%
Վելիկոռուսներ	180 963	33,1%
Սալոռուսներ	64 703	11,8%
Գերմանացիներ	31 590	5,8%
Հրեաներ	24 168	4,4%
Հույներ	17 114	3,1%
Հայեր	8 317	1,5%

1917 թ. հեղափոխությունների և դրանց հաջորդած առաջիկա տարիների ընթացքում

Ղրիմի մահմեդական բնակչությունը /ղրիմի թաթարները/՝ օգտվելով հեղափոխական ու քաղաքացիական պատերազմի խառնաշփոթից, փորձեր էր կատարում թերակղզում իշխանությունը զավթելու: 1919 թ. ձևավորվեց Ղրիմի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը ՌՍՖՍՀ կազմում: 1954 թ.-ին՝ հիմք ընդունելով «Հաշվի առնելով տնտեսության ընդհանրությունը, տարածքային մոտիկությունը, սերտ մշակութային կապերը Ղրիմի մարզի և Ուկրաինայի ԽՍՀ-ի միջև» ձևակերպումը, խորհրդային ղեկավարությունը որոշում կայացրեց Ղրիմը Ուկրաինայի ԽՍՀ-ին փոխանցելու մասին²:

1991 թ. հանրաքվեն³ հարցականի տակ դրեց Ղրիմը Ուկրաինայի ԽՍՀ-ին փոխանցելու և Ղրիմի ինքնավար հանրապետությունը լուծարելու մասին /1945 թվ. կայացված/ որոշումները: Ընդառաջ գնալով Ղրիմի բնակչության կամարտահայտմանը՝ Ուկրաինայի Գերագույն Ռադան մեկ ամիս անց օրենք ընդունեց «Ղրիմի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վերականգնման մասին»: Նույն թվականի օգոստոսի 24-ին Ուկրաինան անկախություն հռչակեց, որին մի քանի օր անց /սեպտեմբերի սկզբին/ միացավ նաև Ղրիմը⁴: 1991 թ. Դեկտեմբերին կայացավ անկախության Համաուկրաինական հանրաքվեն /տես՝ քարտեզ №1/, որն, ըստ մասնագետների, կայացավ ԽՍՀՄ համապատասխան օրենքի կոպիտ խախտմամբ⁵, համաձայն որի ԽՍՀՄ կազմում մնալու կամ նրանից դուրս գալու մասին որոշումը

² ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշումը /19 փետրվարի 1954 թ./ «Ղրիմի մարզը Ռուսաստանի ԽՖՍՀ-ի կազմից դուրս բերելու և Ուկրաինայի ԽՍՀ-ի կազմում ընդգրկելու մասին»,

³ 1991 թ. հունվարի 20-ին Ուկրաինայի ԽՍՀ Ղրիմի մարզում անցկացվեց հանրաքվե «Ղրիմի Ինքնավար Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության վերականգնման ու Միութենական պայմանագրին միանալու մասին հարցով», որի ժամանակ կողմ քվեարկեց թերակղզու բնակչության ավելի քան 90 %-ը,

⁴ 1991 թ. սեպտեմբերի 4-ին Ղրիմի Ինքնավար Հանրապետության Գերագույն խորհուրդը հռչակագիր ընդունեց, որում մասնավորապես ասվում էր «Ուկրաինայի կազմում իրավական ժողովրդավարական պետություն ստեղծելու մասին»,

⁵ Հարցը վերաբերվում է «ԽՍՀՄ կազմից խորհրդային հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգը» ԽՍՀՄ օրենքի 3-րդ հոդվածին

¹ http://www.demoscope.ru/weekly/ssp/rus_lan_97_uezd.php?reg=1420

16-ին, որում Ղրիմի բնակչության 96,77%-ը կողմ արտահայտվեց ՌԴ-ի կազմում ընդգրկվելու օգտին, և անմիջապես հաջորդ օրը՝ հիմնվելով հանրաքվեի արդյունքների վրա, Ղրիմի ղեկավարությունը դիմեց ՌԴ-ին իր կազմում ընդգրկելու խնդրանքով: Եվս մեկ օր անց Ռուսաստանի Դաշնության ու Ղրիմի Հանրապետության միջև ստորագրվեց պայմանագիր «ՌԴ-ի կազմում Ղրիմն ընդունելու մասին»:

Աղյուսակ №20 Ղրիմի բնակչության ազգային կազմը 2014 թ. 9:

Էթնիկ խումբը	Բնակչություն թիվը	%
Ռուսներ	1 492 078	67,9%
Ուկրաինացիներ	344 515	15,1%
Ղրիմի թաթարներ	232 340	10,1%
Թաթարներ	44 996	1,97%
Բելառուսներ	21 694	0,95%
Հայեր	11 030	0,48%

Քննարկված էթնո-քաղաքական հակամարտության առաջացման պատճառների վերլուծական համադրության տեսանկյունից պետք է նշել, որ «Ղրիմի հիմնահարցում» կան շատ ընդհանրություններ Արցախի հիմնախնդրի կարգավորման հարցի հետ, սակայն կան նաև բազմաթիվ առանձնահատկություններ, որոնք ամեն մի կոնկրետ հակամարտությանը հատրդում են յուրատիպ բնույթ, ինչն, իր հերթին, մի կողմից, ենթադրում է որոշակի սկզբունքների ու մոտեցումների ընդհանրություն, սակայն, մյուս կողմից, բացառում է այդ հակամարտությունների կարգավորման ու լուծման բացարձակ ունիվերսալ մեխանիզմի կիրառման հնարավորությունը:

Նախ նկատենք, որ նշված հետխորհրդային էթնո-քաղաքական հակամարտություններին միավորում ու ընդհանրացնում է արտաքին գործոնը՝ աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում: Այս առումով պետք է հիշել աշխարհաքաղաքականության հիմնական օրենքի՝ տալիստկրատիայի և տելուրոկրատիայի միջև ընթացող մշտական պատմական ու քաղաքակրթական հակամարտությունը, որի շրջանակներում Արև-

մուտքի գերխնդիրներից մեկը հանդիսանում է Ռուսաստանի դուրս բերումը համաշխարհային գործընթացներից ու նրա մեկուսացումն իր սահմանների մեջ: Նշված ծրագրի իրականացման համար Արևմուտքի քաղաքական տեխնոլոգները տանսամյակներ շարունակ մշակել և մշակում են տարբեր բնույթի կարճաժամկետ, միջնաժամկետ ու տևական մեխանիզմներ Ռուսաստանի սահմանների ամբողջ պարագծով հակառուսական թշնամական տրամադրությունների սերմանման ու զարգացման համար:

Հարավային Օսիայի, Աբխազիայի և Մերձդնեստրի պարագայում հակամարտող կողմերն ունեն չպոլիէթնիկ բնույթ՝ ռուսական կողմի ակտիվ քաղաքական ու ռազմական աջակցությամբ, որը հանդես էր գալիս նաև որպես խաղաղության ու կայունության պահպանման հիմնական երաշխավորը հակամարտությունների կարգավորման փուլում: Այս առումով բավական ուշագրավ կերպով առանձնանում է Ղրիմի հիմնախնդիրը, որի լուծումը, ինչպես հայտնի է, տեղի ունեցավ առանց ակտիվ ռազմական գործողությունների /ըստ ամենայնի դրանում կարևոր նշանակություն ունեն Սևաստոպոլի ռուսական ռազմաբազայի ներկայությունը/, իսկ հակամարտության ռազմական ամբողջ ծանրությունն իր վրա վերցրեց Ուկրաինայի հարավարևելյան տարածքը /Նովոռոսիան Դոնեցկի և Լուգանսկի Ժողովրդական Հանրապետությունները/:

Աշխարհաքաղաքական ու արտաքին գործոնի ազդեցության տեսանկյունից պետք է նկատել նաև՝ որոշված բոլոր հակամարտությունների որակումը՝ որպես «ներքին էթնիկ հակամարտություններ», բավական հարաբերական է, քանի որ դրանք բոլորն էլ միջազգայնացված են ու իրենց զարգացման որոշակի փուլերում կարող են դիտարկվել որպես միջպետական հակամարտություններ:

Հետխորհրդային տարածքի բոլոր միջէթնիկ հակամարտությունների գլխավոր առանձնահատկություններից ու դրանք նմանակող գործոններից մեկը ԽՍՀՄ ղեկավարության վարած քաղաքականությունն էր, որը ենթադրում էր ներպետական սահմանների կամայական հաստատում /ՄՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի պահանջով՝ առանց հաշվի առնելու էթնիկ խմբերի բաշխվածությունն ու պատմական

⁹ http://www.demoscope.ru/weekly/ssp/rus_lan_97_uezd.php?reg=1420

իրողությունը: Քննարկվող հակամարտությունների նախապատմության բաժնում մենք արդեն ներկայացրել ենք, թե ինչպես երկրի ու կուսակցության դեկավարության գրչի մեկ հարվածով կատարվում էին պատմականորեն ձևավորված ազգային ու մշակութային սահմանների այլաձևված փոփոխություններ, որոնք բավական ծանրակշիռ հիմքեր էին ստեղծում ապագա հակամարտությունների ներուժի սերմանման ու դրսևորման համար, եվ որոնք երկրի զարգացման որոշակի պատմական փուլում /կենտրոնական իշխանության թուլացման, երկրի ժողովրդավարացման ու ազատականացման պայմաններում/ անպայմանորեն պետք է ունենային ակտիվ դրսևորումներ:

Բոլոր հակամարտություններն ունեն նախապատմություն, այսինքն՝ որոշակի պատմական ժամանակաշրջան, որի ընթացքում տեղի է ունենում տարբեր էթնիկ խմբերի միջև հակասությունների սրում և հակամարտության ներուժի կուտակում: Ընդ որում, փոխադարձ պահանջների ներկայացման ու բուն հակամարտության անցման շրջանում հակամարտող կողմերը որպես կանոն հղումներ են կատարում իրենց համար շահավետ պատմական ժամանակաշրջանի ու դրան համապատասխան պատմական արդարության հիմքերի վրա: Հակամարտությունների լատենտ շրջանների առումով ևս առկա են որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, երբեմն այդ փուլը առանձնանում է պարբերական և տարբեր աստիճանի ակտիվացման դրսևորումներով, իսկ երբեմն էլ դա կարող է ունենալ լիովին կամ հարաբերական հանգիստ ընթացք:

Առանձնահատկություններ ու տարբերություններ են նկատելի նաև էթնո-քաղաքական հակամարտությունների ակտիվացման փուլում ներուժի դրսևորման շարժառիթների տեսանկյունից: Մի դեպքում դա կարող է լինել ազգային լեզվի կամ հոգևոր-մշակութային արժեքների պահպանությունը, մեկ այլ դեպքում՝ այլ դրդապատճառները: Սակայն բոլոր դեպքերում դրանց հիմքում ընկած է մեկ հիմնական գործոն. ազգային խտրականությունն ու էթնիկ փոքրամասնությունների իրավունքների ոտնահարումը: Այն երկրներում, որտեղ նախնական տարերային էլույթներն ու հուզումները իվերջո ձեռք են բերում կազմա-

կերպչական տեսք՝ կոնկրետ ազգային-քաղաքական կազմակերպությամբ ու դրա առաջնորդներով, նման հակամարտությունը ստանում է դինամիկ ընթացք:

Չնայած այն հանգամանքին, որ ՄԱԿ-ի անդամ երկրների մեծ մասը դեռ չի ճանաչում Ղրիմի միացումը Ռուսաստանին, պետք է նշել, որ այս միացումը արդեն պատմական փաստ է: Կարևոր է նաև նշել, որ այս հարցում Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը պետք է լինի հավասարակշռված և արտացոլի բացառապես երկու հայկական պետությունների ազգային ու պետական շահերը, այլ ոչ թե պայմանավորված լինի այս կամ այն գերտերության կամքով: Բացի այդ, այս թերակղզին պատմական և աշխարհաքաղաքական առումով կարևոր ռազմավարական նշանակություն է ունեցել հայության և հայկական պետության համար: Ավելին, հայերը Ղրիմում բնակություն են հաստատել դեռևս VI-րդ դարում, այսինքն ավելի վաղ, քան թաթարները /թյուրքերը/ կամ ռուսները: XIV դարում Ղրիմում մոտ 150 000 հայ է բնակվել, որոնք կազմում էին թերակղզու բնակչության 35%-ը, այդ թվում Ֆեոդոսիայի բնակչության 2/3-ը: Համոզված ենք, որ դեռևս 1990-ական թթ. Արցախի հայության պայքարը հանուն անկախության և ազատության դարձավ նախադեպ Ղրիմի բնակչության համար, որոնց, ի տարբերություն հայերին, քանի որ նրանց թիկունքում կանգնած էր հզոր գերտերություն, հաջողվեց հասցնել այս պայքարը տրամաբանական ավարտին՝ անարդարացիորեն երկու մասի բաժանված ազգի վերամիավորումը մեկ պետության շրջանակում:

Գրականություն

1. *Բարսեղյան Հ.* Աշխարհագրական անունների հայերեն տառադարձության մասին որոշում: Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու: Երևան: 9-րդ հրաշալիք, 2006:
2. *Գրգեարյան Հ., Հարությունյան Ն.* Աշխարհագրական անունների բառարան: Երևան: «Լույս», 1987:
3. *Андреев А.* История Крыма: Краткое описание прошлого Крымского полуострова, Москва: Межрегиональный центр отраслевой информатики Госатомнадзора России, 1997.
4. *Сафонов В.* Государственное единство и территориальная целостность в судебных решениях: международные и конституционно-правовые

- аспекты, Москва: Российская академия правосудия, 2008.
5. *Томсинов В.* «Крымское право» или Юридические основания для воссоединения Крыма с Россией, Москва: Зерцало-М, 2015.
 6. *Fisher A.* The Ottoman Crimea in the Sixteenth Century, London: Harvard, 2015.
 7. *Gwendolyn S.* The Crimea Question: Identity, Transition, and Conflict, LA: Jatquest, 2017.
 8. *Khalii I.* The process of Transformation in the Modern Crimea, NY: Jespers Press, 2016.
 9. *Kirimli H.* National Movements and National Identity Among the Crimean Tatars (1905 - 1916), Istanbul: Jeuletin, 2012.
 10. *Яacobсон А.* Крым в средние века, Москва: Наука, 1973.